

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի  
Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ն Մ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ք. Երևան

--/--/----թ.

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ **Պատվիրատու**, ի դեմս Գնումների և մատակարարման շղթայի կառավարման բաժնի ղեկավար ----, որը գործում է -----թ. տրված -----լիազորագրի հիման վրա, մի կողմից և -----, այսուհետ՝ **Կատարող**, ի դեմս տնօրեն-----, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ միասին՝ **Կողմեր**, իսկ առանձին՝ **Կողմ**, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ **Պայմանագիր**, հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

- 1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սուբհանդակային ծառայություններ համաձայն Պայմանագրին կից ներկայացված հավելված 1-ի /այսուհետ՝ Հավելված 1/ /այսուհետ՝ **Ծառայություններ**/՝ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր – նամակի/այսուհետ՝ Պատվեր Կամ Պատվեր-նամակ/ և դրանում նշված քանակի, ժամկետների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների համար Պայմանագրի 3-րդ կետում նշված չափով և կարգով:
- 1.2. Ծառայությունների հանձնում-ընդունումը ձևակերպվում է երկկողմանի հաստատված հարկային հաշիվներով, որոնք Պատվիրատուն իրավունք ունի չստորագրել՝ նշելով չստորագրման պատճառները՝ օգտվելով Պայմանագրի 2.4.3 ենթակետով իրեն վերապահված իրավունքներից:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

- 2.1. **Կատարողը պարտավոր է**
  - 2.1.1. Ծառայությունները մատուցել ինքնուրույն, ամբողջ ծավալով, Պայմանագրով սահմանված ժամկետներում և պատշաճ որակով,
  - 2.1.2. Պատվիրատուի պահանջով վերացնել մատուցվող Ծառայություններում հայտնաբերված թերությունները՝ նույն օրը, իսկ դրա կատարման անհնարինության դեպքում ոչ ուշ, քան 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում,
  - 2.1.3. Պատվիրատուի պահանջով տրամադրել բանավոր և գրավոր տեղեկատվություն՝ Ծառայությունների մատուցման ընթացքի մասին,
  - 2.1.4. Կատարել Պատվիրատուի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն տրվող ցուցումները կապված Ծառայությունների պատշաճ մատուցման հետ,
  - 2.1.5. Պատվիրատուի կողմից Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուի ընտրությամբ նույն օրը, իսկ դրա կատարման անհնարինության դեպքում ոչ ուշ, քան 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները կամ հատուցել հայտնաբերված թերությունները վերացնելու ուղղությամբ կատարված ծախսերը և կրած վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը կամ համամասնորեն նվազեցնել Պայմանագրի գինը,
  - 2.1.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել բանկային և այլ գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնք, հնարավոր է, ուղղակի կամ անուղղակի միջոցով հասու լինեն իրեն Ծառայությունները մատուցելու ընթացքում,
  - 2.1.7. Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Պատվիրատուին տրամադրել կատարված և ընթացքի մեջ գտնվող առաքանիների վերաբերյալ էլեկտրոնային հարթակի /այսուհետ՝ Հարթակ/ դիտման հասանելիություն,
  - 2.1.8. Պայմանագիրը ցանկացած հիմքով դադարեցնելու դեպքում ապահովել Պատվիրատուի կողմից արդեն իսկ ներկայացված Պատվերով քարտերի առաքումը Պայմանագրով սահմանված պահանջները պահպանելով:

2.1.9. Յուրաքանչյուր աշխատանքային օր Հարթակում թարմացնել առաքանահինների վերաբերյալ առկա տվյալները/տեղեկատվությունը և տեղադրել Պատվիրատուի հաճախորդների/այսուհետ՝ Հաճախորդ/ կամ առաքանին ստացած անձանց կողմից ստորագրված ստացականները:

## **2.2. Կատարողն իրավունք ունի՝**

2.2.1. Պահանջել Պատվիրատուից վճարել պատշաճ որակով մատուցված Ծառայությունների համար՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գները և վճարման ժամկետները,

2.2.2. Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկություններ:

## **2.3. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.3.1. Կատարողին վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների համար՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գները և վճարման ժամկետները, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուի պահանջով Կատարողը վերադրաձևում է առաքանին Պատվիրատուին առանց առաքման փորձի իրականացման,

2.3.2. Կատարողին տրամադրել նրա կողմից Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկություններ և ցուցումներ,

2.3.3. Պայմանագիրը և/կամ համապատասխան Պատվերը իր նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու դեպքում Կատարողին վճարել մինչև լուծման պահանջը ներկայացնելու օրվա դրությամբ Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների համար, բացառությամբ այն դեպքի, երբ նման վաղաժամկետ լուծումը հետևանք է Կատարողի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու,

2.3.4. Տրամադրել Ծառայությունների մատուցման համար բոլոր անհրաժեշտ տվյալները:

## **2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.4.1. Պահանջել Կատարողից Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և Պատվերով ամրագրված ժամկետներում,

2.4.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակն՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը,

2.4.3. Հրաժարվել Ծառայությունների հարկային հաշիվը ստորագրելուց՝ սեփական ընտրությամբ Կատարողից պահանջելով նույն օրը, իսկ դրա կատարման անհնարինության դեպքում ոչ ուշ, քան 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնելու մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները կամ հատուցելու հայտնաբերված թերությունները վերացնելու ուղղությամբ կատարված ծախսերը կամ համամասնորեն նվազեցնելու Պայմանագրի գինը,

2.4.4. Ծառայությունների մատուցման ընթացքում ցանկացած ժամանակ Կատարողից պահանջել տեղեկատվություն Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ,

2.4.5. Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողին տալ ցուցումները՝ կապված Ծառայությունների պատշաճ մատուցման հետ,

2.4.6. Վաղաժամկետ լուծել Պայմանագիրն՝ այդ մասին առնվազն 10 /տասը/ օր առաջ գրավոր ծանուցելով Կատարողին՝ և վճարելով մինչ ծանուցման պահը Կատարողի կողմից մատուցված ծառայությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրի վաղաժամկետ լուծման պահանջը հետևանք է Կատարողի կողմից Պայմանագրով և/կամ Պատվերով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման,

2.4.7. Հրաժարվել Ծառայությունների դիմաց վճարելուց և պահանջել իրեն պատճառված վնասների հատուցում, եթե Կատարողը պատշաճ և/կամ ժամանակին չի կատարում Պայմանագրով և/կամ Պատվերով ստանձնած իր պարտավորությունները:

2.4.8. Չվճարել վերադարձվող (չհանձնված) առաքանիների համար, եթե վերը նշված առաքանիները գերազանցում են 1 /մեկ/ ամսվա ընթացքում ընդհանուր առաքման տրամադրված առաքանիների քանակի 10% (տասը) տոկոսը:

## **3. Պայմանագրի գինը և վճարման կարգը**

3.1. Պայմանագրով մատուցվող Ծառայությունների արժեքները համապատասխանաբար նշված են Հավելված 1-ում: Վճարումները կատարվում են՝ հիմք ընդունելով Պատվիրատուի Պատվեր-

նամակը, Հավելված 1-ում նշված Ծառայությունների արժեքները և Կատարողի կողմից ներկայացված հարկային հաշիվը/հաշիվները: Ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են անկանխիկ փաստացի մատուցված ծառայության ավարտին հարկային հաշիվների երկկողմանի ստորագրման օրվանից ոչ ուշ, քան 15/տասնհինգ/ բանկային օրվա ընթացքում:

#### **4. Կողմերի պատասխանատվությունը**

- 4.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև պատճառված վնասների համար, Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով, իսկ վերջինովս նախատեսված չլինելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ընդ որում Պայմանագրով սահմանված տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:
- 4.2. Պայմանագրով սահմանված ժամկետային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը Պատվիրատուի գրավոր պահանջի դեպքում վերջինիս վճարում է տույժ՝ մինչև այդ պահը Պատվիրատուի կողմից ներկայացված Պատվեր-նամակներով ամրագրված Ծառայությունների ընդհանուր գնի/այսուհետ՝ Գին/ 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք Գնի 10%-ի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:-
- 4.3. Պայմանագրով սահմանված ժամկետում Ծառայությունների դիմաց Կատարողին չվճարելու դեպքում Պատվիրատուն Կատարողի գրավոր պահանջի դեպքում վերջինիս վճարում է տույժ՝ վճարման ենթակա չվճարված գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք Պայմանագրի գնի 10%-ի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:
- 4.4. Կողմերը Պայմանագրով չնախատեսված այլ դեպքերում, իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.5. Տուժանքների վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելուց:
- 4.6. Հաճախորդի կողմից ներկայացված հիմնավոր դժգոհության առկայության դեպքում, որը առաջացել է Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու և/ կամ 2-րդ հավելվածով/ այսուհետ՝ Հավելված 2/ նախատեսված պահվածքի նվազագույն պահանջները չպահպանելու պարագայում, և Կատարողի կողմից հակառակը փաստող ապացույցներ չներկայացնելու դեպքում՝ Պատվիրատուի գրավոր /այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված/ պահանջով 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պարտավոր է վճարել տուգանք՝ 10,000 /տասը հազար / ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր դեպքի համար:
- 4.7. Ծրարը սխալմամբ 3-րդ անձի առաքելու և/կամ Ծրարի կորստի և/կամ Հաճախորդին ստացականը ստորագրելու չներկայացնելու և/կամ ստացականի և/կամ նույնականացման համար Պայմանագրով սահմանված պահանջները չպահպանելու դեպքերում՝ Պատվիրատուի գրավոր /այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված/ պահանջով 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պարտավոր է վճարել տուգանք՝ 100,000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր դեպքի համար:
- 4.8. Ծրարը Պատվիրատուի նշած հասցեից տարբերվող հասցեում և/կամ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելվածի 1-ի 1.3.3 կետով սահմանցած եղանակներից տարբերվող եղանակով Հաճախորդին առաքելու և/կամ Ծրարը ոչ բնակելի և/կամ Հաճախորդի կողմից նշված հասցեում առանց պատշաճ նույնականացման տրամադրելու և/կամ Ծրարում առկա քարտի վնասման պարագայում Պատվիրատուի գրավոր /այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված / պահանջով 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պարտավոր է վճարել տուգանք՝ 50,000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր դեպքի համար:
- 4.9. Հաճախորդի /հասցեատիրոջ/ հետ համաձայնեցված ժամկետում քարտի չառաքման յուրաքանչյուր դեպքի համար Պատվիրատուի գրավոր /այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված/ պահանջով 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պարտավոր է վճարել

տուգանք՝ 10,000 /տասը հազար/ ՀՀ դրամի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ առաքումը չի իրականացվել Հաճախորդի /հասցեատիրոջ/ պահանջով և/կամ համաձայնեցված ժամին Հաճախորդի չներկայամալու պատճառով:

- 4.10. Չառաքված և/կամ Պատվիրատուի պահանջով վերադարձման ենթական առաքանին Հավելված 1-ի 1.2.3 ենթակետի ժամկետներից ուշ վերդարձնելու դեպքում Պատվիրատուի գրավոր /այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված/ պահանջով 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պարտավոր է վճարել տուգանք՝ 10,000 /տասը հազար/ ՀՀ դրամի չափով, բացառությամբ, այն դեպքերի, երբ վերադարձը հնարավոր չէ կատարել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

#### **5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

- 5.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, այն է՝ տուժանքի վճարման կամ վնասի հատուցման պարտավորությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:
- 5.2. Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ են համարվում այնպիսի արտակարգ հանգամանքները, որոնք ծագել են Պայմանագրի կնքումից հետո՝ չհանդիսանալով Կողմերից որևէ մեկի մեղքի հետևանք, տվյալ պայմաններում ողջամտորեն չէին կարող կանխատեսվել կամ կանխարգելվել Կողմերի կողմից և օբյեկտիվորեն անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ բնական աղետները (երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ և այլն), սոցիալական անկարգությունները, պատերազմը՝ այդ թվում քաղաքացիական պատերազմը, ռազմական գործողություններ, գործադուլներ, հասարակական անկարգություններ, համաճարակը, համավարակը, պետական իրավասու մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները, այդ թվում նաև՝ այդ մարմինների կողմից Կողմերի նկատմամբ պարտադիր իրավական ուժ ունեցող այնպիսի որոշումների կայացումը/իրավական ակտերի ընդունումը, և այլ նման հանգամանքներ ,որոնք անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը:
- 5.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներում հայտնված Կողմը պարտավոր է դրա ծագման պահից 24 (քսանչորս) ժամվա ընթացքում Պայմանագրով նախատեսված կարգով տեղեկացնել մյուս Կողմերին այդ մասին:
- 5.4. Կողմը չի կարող վկայակոչել անհաղթահարելի ուժի առկայության մասին և ազատվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից, եթե չեն պահպանվել սույն գլխով նախատեսված կարգը և պայմանները, որպիսի դեպքում շարունակում են գործել Պայմանագրով նախատեսված պատասխանատվության պայմանները:
- 5.5. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքները տևում են 2 (երկու) ամսից ավելի, ապա այն Կողմը, ում նկատմամբ ստանձնած պարտավորությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում այդ հանգամանքների հետևանքով, իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 10 (տասն) աշխատանքային օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով մյուս Կողմին: Սույն կետի հիման վրա Պայմանագրի լուծման դեպքում գործում են Պայմանագրի վաղաժամկետ դադարման կապակցությամբ կիրառելի հետևանքները ընդհանուր հիմունքներով՝ Պայմանագրի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների համապատասխան:
- 5.6. Կողմերը սույնով արձանագրում են, որ անհաղթահարելի ուժի հետևանքով Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից /տուժանքի վճարումից, վնասների հատուցումից/ ազատումը չի հանդիսանում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումից ազատման հիմք, եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:
- 5.7. Պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված հանգամանքների վերանալու դեպքում Կողմերը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում տեղյակ են պահում միմյանց և հայտնում են պայմանագրային պարտավորությունների կատարումը վերսկսելու ժամկետի մասին:

## **6. Հակակոռուպցիոն վերապահություն**

- 6.1. Կողմերից յուրաքանչյուրը սույնով պարտավորվում է պահպանել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները և չձեռնարկել որևէ գործողություն, որով կարող են խախտվել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները, կապված Պայմանագրով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ, այդ թվում (բայց չսահմանափակվելով)՝ չկատարել առաջարկ, չտալ համաձայնություն, խոստում, չիրականացնել ոչ օրինական վճարումներ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) կաշառքը՝ փողի կամ ցանկացած այլ տեսքով, որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ առևտրային կազմակերպություններին, պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, մասնավոր ընկերություններին և նրանց ներկայացուցիչներին:
- 6.2. Կողմերից որևէ մեկի կողմից Պայմանագրի 6.1 կետով նախատեսված պարտականությունների խախտման և հիմնավոր ապացույցների առկայության դեպքում տուժող կողմն իրավունք ունի պահանջել վնասների հատուցում մյուս կողմից և արտադատական կարգով միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարումից:

## **7. Եզրափակիչ դրույթներ**

- 7.1 Կողմերը սույնով պարտավորվում են Պայմանագրի կնքման և կատարման առնչությամբ Կողմերին հայտնի դարձած, ինչպես նաև մյուս Կողմի բացահայտած տեղեկատվությունը չհրապարակել, չտարածել, երբորդ անձանց հայտնի չդարձնել, ինչպես նաև երբորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չընձեռել, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը գաղտնի չի համարվում, քանի որ.
- 7.1.1 նախապես հայտնի է ընդունող Կողմին այլ իրավաչափ աղբյուրներից/եղանակով,
- 7.1.2 հանդիսանում է կամ դառնում է հասարակայնորեն հասանելի,
- 7.1.3 թույլատրված է հրապարակման համապատասխան Կողմի գրավոր համաձայնությամբ:
- 7.2 Պայմանագրի 7.1 կետով Կողմերի համար սահմանված պարտավորությունը գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո անորոշ ժամկետով:
- 7.3 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև --/--/----թ.-ն
- 7.4 Պայմանագրի և/կամ Պատվերի բոլոր փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են երկկողմանի ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու ձևով:
- 7.5 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:
- 7.6 Պայմանագրից և/կամ Համաձայնագրերից ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 7.7 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 /երկու/ հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## **8 Կողմերի ծանուցումները իրավաբանական հասցեները և ստորագրությունները**

- 8.1 Սույնով Կողմերն համաձայնում են, որ միմյանց հետ ցանկացած հաղորդակցում/ծանուցում/փաստաթուղթ, որը կապված է Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ Պայմանագրից բխող ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ, կատարվում է սույն Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի և/կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի /առկայության դեպքում/ միջոցով, իսկ դրանց բացակայության դեպքում սույն Պայմանագրում նշված փոստային հասցեով առաքման եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ: Ընդ որում, Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված, երբ ծանուցումն ուղարկվել է Կատարողի տրամադրած պաշտոնական և/կամ այլ էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը: Այս դեպքում Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումն ստանալուն հաջորդող օրվանից:

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

« » ՍՊԸ  
Հասցե՝  
ՀՎՀՀ՝  
Բանկ  
Հ/Հ՝  
Հեռ.  
Էլ. փոստի հասցե՝  
Տնօրեն՝

---

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

“Ամերիաբանկ” ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2  
[office@ameriabank.am](mailto:office@ameriabank.am)  
ՀՎՀՀ 02502212  
Թ/Հ ՀՀ ԿԲ-ում 103002101576  
հեռ. 56-11-11  
Գնումների և մատակարարման շղթայի  
կառավարման բաժնի ղեկավար՝  
  
Աշոտ Հարությունյան

---

1. Ծառայությունների նկարագրություն.

1.1 Առաքանի են հանդիսանում Պատվիրատուի Պատվերի հիման վրա Կատորողին տրամադրված ծրարը կամ փաթեթը:

1.2 Կատարողը պարտավոր է.

1.2.1 Առաքիչներին ուսուցանել Հաճախորդի հետ հաղորդակցման հմտությունները Պատվիրատուի համար ընդունելի ստանդարտների համաձայն, հետևողական լինել առաքանու հանձնման կանոններին՝ համաձայն Հավելված 2-ի,

1.2.2 Հետևել առաքանու ստացմանը, պահպանել կոնֆիդենցիալություն:

1.2.3 Սույն հավելվածի 1.3.5 ենթակետով սահմանված ժամկետի ավարտից հետո չառաքված և/կամ Պատվիրատուի պահանջով վերադարձման ենթակա առաքանին Պատվիրատուին վերադարձնել Երևանում՝ 1 /մեկ/, մարզերում՝ 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում:

1.3 Առաքանու հանձնման կանոնները.

1.3.1 Առաքումն իրականացնելուց առնվազն 20 /քսան/ րոպե առաջ առաքիչը պետք է կապ հաստատի գրանցված հեռախոսահամարով՝ տեղեկացնելով առաքման մոտավոր ժամանակահատվածը:

1.3.2 Առաքանին կարող է տրամադրվել բացառապես հայտում գրանցված հասցեում նշված անձին, իսկ անհնարինության դեպքում, նշված հասցեում գտնվող անձին: Այն դեպքում երբ առաքանին առաքվում է հասարարական վայր, առաքանին կարող է հանձնվել բացառապես այն անձին ում ուղղված է՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա պատշաճ նույնականացում իրականացնելու դեպքում:

1.3.3 Առաքանին միայն կարող է հանձնվել ի սկզբանե նշված հասցեում, հասցեի փոփոխություն առաքիչի կողմից չի կարող կատարվել, բացառությամբ են այն դեպքերի, երբ Հաճախորդի պահանջով և առաքիչի համաձայնությամբ առաքումը իրականացվել է վերջիններիս կողմից համաձայնեցված հասցեում, այդ դեպքում առաքիչը պետք է առաքանին հանձն անձամբ Հաճախորդին անձը հաստատող փաստաթղթի հիման վրա պատշաճ նույնականացում իրականացնելու, որը իրականացվում է Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթում առկա տվյալները ստուգելու և առաքիչի ունեցած տվյալների հետ համընկնման ստուգման միջոցով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ գործողություններն իրականացնելու միջոցով, և Հաճախորդի կողմից ստացականում անհրաժեշտ տեղեկատվությունը լրացնելուց և ստորագրելուց հետո: Հասցեի փոփոխություն նաև կարող է կատարվել Պատվիրատուի կողմից՝ նոր հասցեն Պատվիրատուի կողմից լիազորված անձի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկելու միջոցով:

1.3.4 Հաճախորդի հետ կապը պետք է հաստատվի ձայնագրվող հեռախոսահամարով՝ որի ձայնագրությունները պետք է տրամադրվեն Պատվիրատուին ըստ պահանջի: Ընդ որում ձայնագրվում են և՛ մուտքային, և՛ ելքային զանգերը: Ձայնագրությունները պետք է պահպանվեն նվազագույնը 3 /երեք/ ամսվա ընթացքում:

1.3.5 Առաքանին սանալուց հետո Երևանում 3/երեք/, իսկ մարզերում 4/չորս/ աշխատանքային օրվա ընթացքում առաքիչը պետք է իրականացնի առաքանու առաքման առնվազն 3 փորձ, եթե չի ստացվում առաքանին փոխանցել Հաճախորդին, ապա սույն հավելվածի 1.2.4 ենթակետում նշված ժամկետում առաքանին պետք է վերադարձվի Պատվիրատուին:

- 1.3.6 Յուրաքանչյուր առաքումից հետո, Կատարողը պարտավոր է իրականացնել 2.1.9 կետի պահանջը,
- 1.3.7 Առաքիչը առաքնանին հանձնելու համար պետք է Հաճախորդի, ստորագրմանը ներկայացնի ստացական, որը պետք է ներառի հետևյալ դաշտերը`
- 1.3.7.1 Հաճախորդի անուն/ազգանուն/պետք է լրացվի Կատարողի կողմից/,
- 1.3.7.2 առաքման հասցե/ պետք է լրացվի Կատարողի կողմից/,
- 1.3.7.3 ստացման հասցե /պետք է լրացվի այն դեպքում եթե ստացման հասցեն տարբերվում է առաքման հասցեից Հաճախորդի կամ հայտում նշված հասցեում գտնվող անձի կողմից/,
- 1.3.7.4 ստացման ամսաթիվը /պետք է լրացվի Հաճախորդի կամ հայտում նշված հասցեում գտնվող անձի կողմից/,
- 1.3.7.5 ստացողի անուն/ազգանուն/պետք է լրացվի Հաճախորդի կամ հայտում նշված հասցեում գտնվող անձի կողմից/,
- 1.3.7.6 ստորագրություն /պետք է լրացվի Հաճախորդի կամ հայտում նշված հասցեում գտնվող անձի կողմից/:

<b>Ծրարների առաքում ք. Երևանում և արվարձաններում /Առինջ, Ջրվեժ, Արգավանդ, Փարաքար, Նորագավիթ, Քասախ, Պռոշյան, Նոր Խարբերդ/</b>	
Մինչև 300գր., A3, A4, A5 կամ Եվրո չափսի ծրարներ և բացիկներ	
<b>Ժամկետ</b>	<b>Գին, ՀՀԴ միավորի համար/առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերի/</b>
1	մինչև 3 աշխ. օրվա ընթացքում(բոլոր 3 փորձերով)
<b>Ծրարների առաքում ՀՀ մարզերում, այդ թվում մարզերին կից Երևանամերձ գոտում</b>	
Մինչև 300գր., A3, A4, A5 կամ Եվրո չափսի ծրարներ և բացիկներ	
<b>Ժամկետ</b>	<b>Գին, ՀՀԴ միավորի համար/առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերի/</b>
2	4 (բոլոր 3 փորձերով)աշխ. օրվա ընթացքում

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ`**

Հասցե` -----  
 ՀՎՀՀ` -----  
 Բանկ` «Ամերիաբանկ» ՓԲԸ  
 Հ/Հ` 1570048317700100  
 Հեռ. -----  
 Էլ. փոստի հասցե` -----  
 Տնօրեն`

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ`**

“Ամերիաբանկ” ՓԲԸ  
 ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2  
[office@ameriabank.am](mailto:office@ameriabank.am)  
 ՀՎՀՀ 02502212  
 Թ/Հ ՀՀ ԿԲ-ում 103002101576  
 հեռ. 56-11-11  
 Գնումների և մատակարարման  
 շղթայի կառավարման բաժնի  
 ղեկավար`

Աշոտ Հարությունյան

Հավելված 2

-----ն «Ամերիաբանկ» ՓԲԸ միջև -----կնքված  
Սուրհանդակային ծառայությունների գլխավոր գնման պայմանագրի

## **Քարտերի առաքման ընթացքում առաքիչի պահվածքի նվազագույն պահանջներ**

### **Առաքիչի արտաքին տեսք**

#### **Առաքիչը պետք է ունենա խնամված և կոկիկ տեսք:**

Անձնական հիգիենայի և խնամքի հիմնական կանոններն են՝

- Ամենօրյա անձնական խնամքի ապահովում,
- Կոկիկ, մաքուր և սանրված վարսեր, բեղեր և մորուս,
- Նուրբ և չափավոր օծանելիք,

### **Հաղորդակցման կանոններ**

- Հաճախորդի հետ հաղորդակցվելիս անհրաժեշտ է պահպանել գործնական տոնը և հարգալից վերաբերմունքը
- Հաճախորդի հետ անհրաժեշտ է խոսել «Դուք» ով
- Ելքային զանգ իրականացնելիս գրույցը հարկավոր է սկսել հետևյալ արտահայտությամբ՝ «Բարև Ձեզ, .....-ի հե՞տ եմ խոսում»

- Բացառապես դրական պատասխանի պարագայում տեղեկացնել որ զանգն առաքող ընկերությունից է՝ «Ամերիաբանկ» քարտի առաքման նպատակով:
- Իրականացնել քարտի առաքման նպատակով անհրաժեշտ պայմանավորվածությունը
- Պայմանավորվածության պահպանման անհնարինության պարագայում Հաճախորդին հետադարձ զանգի միջոցով տեղեկացնել դրա մասին՝ ձեռք բերելով նոր պայմանավորվածություն:

**Կոնֆլիկտային իրավիճակի/բողոքի/Հաճախորդի ոչ կոնստրուկտիվ պահվածքի դեպքում անհրաժեշտ է պահպանել հանդարտություն և չտրվել հույզերին:**

**Անհրաժեշտ է՝**

- Համբերությամբ լսել Հաճախորդին մինչև վերջ,
- Չընդհատել Հաճախորդին, նրա հետ զուգահեռ չխոսել,
- Չտրվել հույզերին և չտանել խոսակցությունը ոչ կոնստրուկտիվ դաշտ,
- Եթե Հաճախորդի կողմից բարձրաձայնաձ հարցը/խնդիրը առաքիչի իրավասությունից դուրս է, Հաճախորդին ուղղորդել դիմել Բանկ,
- Միջադեպի մասին առաքիչ կազմակերպության միջոցով տեղեկացնել Բանկին:

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**

-----  
 Հասցե՝ -----  
 ՀՎՀՀ՝ -----  
 Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ  
 Հ/Հ՝ 1570048317700100  
 Հեռ. -----  
 Էլ. փոստի հասցե՝ -----  
 Տնօրեն՝  
 -----  
 \_\_\_\_\_

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ի՝**

“Ամերիաբանկ” ՓԲԸ  
 ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2  
[CardDelivery@ameriabank.am](mailto:CardDelivery@ameriabank.am)  
 ՀՎՀՀ 02502212  
 Թ/Հ ՀՀ ԿԲ-ում 103002101576  
 հեռ. 56-11-11  
 Գնումների և մատակարարման  
 շղթայի կառավարման բաժնի  
 ղեկավար՝  
 \_\_\_\_\_  
 Աշոտ Հարությունյան